

**Տավուշի մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանի Ելույթը հանդիսավոր
գորակոչի ընթացքում 11.01.2015թ.**

Հունվարի 11-ը Տավուշի մարզում առաջին գորակոչային օրն էր: Մարզի բոլոր տարածաշրջաններում 2015 թվականի ձմեռային գորակոչի մեկնարկը տրվեց մեծ հանդիսավորությամբ: Իջևանի զինկոմիսարիատի մոտ արարողությանը մասնակցեց Տավուշի մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը: Ելույթ ունենալով մարզպետի նա առաջ.

սիրելի գորակոչիկներ,

այսօրը խիստ հիշարժան կլինի Ձեր կենսագրության մեջ, քանի որ դուք մեկնում եք պաշտպանելու մեր երկրի սահմանները, կատարելու հայրենիքի նկատմամբ Ձեր պարտքը: Մի քանի ժամից ընդամենը դուք արդեն կկրեք զինվորական համազգեստ ու կդառնաք Հայոց բանակի զինվոր, իսկ դա պատիվ է յուրաքանչյուր հայ տղամարդու համար: Պատիվ է, քանի որ դուք Ձեր բաժին պարտքն եք տալիս հայոց երկրի խաղաղությանը: Թող Հայաստան աշխարհում արշալույսները միշտ խաղաղ լինեն, իսկ դուք միայն հսկեք այն: Ես մաղթում եմ Ձեզ բարի ծառայություն և բարի վերադարձ: Ձեր ծնողներին համբերություն ցանկանալով՝ շնորհակալություն եմ հայտնում զինվոր տղաներ մեծացնելու համար: